

ԳՐԱՆՑՈՒՄ ԲԶՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԻՋՈՑՈՎ

1. Ներբեռնել ՄոբիԴրամի բջջային հավելվածը AppStore-ից կամ GooglePlay-ից,
2. Կատարել պահանջվող քայլերը և գրանցվել

ԳՐԱՆՑՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՔԷՋԻ ՄԻՋՈՑՈՎ

1. Մուտք գործել www.mobidram.mts.am կայք,
2. Նշել «Գրանցում»,
3. Կատարել պահանջվող քայլերը և գրանցվել

Ավարտելով գրանցման փուլը՝ հաճախորդը անցնում է նույնակացման գործընթաց հետեւյալ տարբերակներից* մեկով:

Առցանց նույնականացում

1. Հաշվառման հաշվի հիմնական էջից ընտրել Դառնալ Դրեմիում հաճախորդ հրահանգը,
2. Մուտքագրել ՀՀ-ում գործող բանկի կողմից թողարկված քարտի 16 նիշանոց թվերը,
3. Մուտքագրել նույնականացման փաստաթղթի տվյալները,
4. Կատարել պահանջվող քայլերը՝ բանկային քարտը կցելով ՄոբիԴրամի հաշվառման հաշվին: Առցանց նույնականացման դեպքում նշված բանկային քարտից գանձվում է 100դրամ, որը փոխանցվում է հաճախորդի Էլ.դրամապանակի հաշվին: Համակարգում հնարավոր է նույնականալ միայն բանկային քարտի և նույնականացման տվյալների համապատասխանության դեպքում:

Նույնականացում մասնաճյուղում

1. Այցելել Ընկերության մասնաճյուղերից մեկը,
2. Ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթը և սոցիալական քարտը Ընկերության աշխատակցին,
3. Աշխատակիցը ստուգում է փաստաթղթերի համապատասխանությունը, պատճենում կամ սքանավորում է դրանք՝ հաճախորդի հաշվին կցելու համար:
4. Աշխատակիցը ստուգում է հաշվին կցված քարտի առկայությունը,
5. Հաճախորդը ստորագրում է գրանցման հայտը:

Հեռավար նույնականացում

1. Բջջային հավելվածի կամ Ընկերության կայքէջի միջոցով գրանցվել համակարգում,
2. Սքանավորել անձը հաստատող փաստաթուղթը և սոցիալական քարտը,
3. Տեսաձայնագրությամբ հայտնել ցանկություն համակարգում գրանցվելու համար,
4. Տեսագրությունը, անձը հաստատող փաստաթղթի սքանավորված տարբերակը և հաշվի նույնականացուցիչը ուղարկել Viber-ի կամ WhatsApp-ի +37498600888 համարին:
5. Մուտքագրված տվյալների համապատասխանության և կցված բանկային քարտի առկայության դեպքում հաճախորդի հարցմանը ընթացք է տրվում մեկ աշխատանքային օրվա ընթացքում: